

մամբ և Արշակունի կայսեր, տրուած արինաւթոյր պուլղարասպան տիտղոսը (= պըլկարուպիէց ըստ պուլկարաց) անտարակոյտ պարծանք մը չէ:

Վասիլ ուխտ էր ըրած Սամուէլը գահագուրկ կամ մեռած տեսնելէ վերջ առանձնանալ վանք մը: Կէ արդարեւ հրաժարեցաւ ան իր կայսրութենէն և նետելով իր արքայական ծիրանին՝ գնաց ապաստանեցաւ հայոց Պատուիճիակ վանքը:

Պուլկարիոյ հայոց պատուաբեր ձեռակերտներէն մին է 1084ին Գրիգոր Բակուրեան հայ իշխանին շինած Պաշկովայի հսկայ վանքը Սմալէնսքի նահանգին, Սթանիմաք գիւղին մօտ, Ֆիրիպէէն 20 — 21 քիլոմէթր հեռու: Այս վանքին մասին արդէն մանրամասն գրած ենք Բագմավէպի 1924 Նոյեմբերի թիւին մէջ, էջ 362 «Պաշկովայի հայ վանքը» խորագրով:

1169ին երբ Ներսէս Ծնորհալիի պատասխանը հասաւ Կ. Պոլիս Մանուէլ կայսեր, կայսրը ինք անձամբ տարաւ զայն Պատրիարքարանի կրօնական Մեծ Ժողովին: Այդ նամակին նիւթը հայ-յոյն կրօնական միութիւնն էր: Մանուէլ կայսեր առ Ներսէս զրկած երկու պատուիրակներուն մին էր Լիզիոն Մաստո Թէորիանէ փիլիսոփան որ շատ մեծ ճարտարաբան և աստուածաբան մէկն էր և իրեն հետ ալ՝ անշուշտ իբրեւ թարգման և օգնական, Գովհաննէս Ութման անունով հայ քահանան «հայր վանաց հայոց ի փիլիպպուպուլեայ» (ըստ Չամէանի): Ասիկա ապացոյց մ'է հայոց ամէն կերպ մեծ գաղութ մը եղած ըլլալուն Ֆիրիպէի և Պուլկարիոյ մէջ: Այնքան մեծ՝ որ ունէին նաեւ վանքեր և առաջնորդներ, ինչպէս որ յետոյ պիտի տեսնենք: Մինչեւ 1173, այսինքն մինչեւ Ներսէս Ծնորհալոյ մահը շարունակուող սոյն կրօնական միութեան ժողովը, ինչպէս արդէն ծանօթ է, չուրս ինկաւ, որու ընթացքին Գովհաննէս Ութման երիցս գնաց Հայաստան և դարձաւ Կ. Պոլիս:

Այս անշուշտ բանակցութիւններէն ետք հայերը այս անգամ որոշեցին միանալ լատինաց հետ: Բունաց կողմէ գէշ աչքով դիտուեցաւ այս, և անոնք սկսան հայոց դէմ դաւեր լարել: Հայոց Գրիգոր կաթողիկոսը զգալով վտանգը, անմիջապէս կը գրէ ճարտարաբան և լատինագէտ «փիլիպպուպուլեայ» Գրիգոր հայ եպիսկոպոսին անոր յանձնարարելով երթալ և անձամբ Հռովմի մէջ հայոց համար աշխատիլ, հայոց դիրքը լատինացոց մօտ բարձր պահելու համար: Եւ արդարեւ Գրիգոր եպիսկոպոս Ֆիրիպէցի մասնաւոր թուղթով, ուղեկիցներով կը հասնի Հռովմա Ան հոն չի գտնել Գուկիոս պապը որ նոյն միջոցին կարեւոր ժողովի մը մասնակցելու համար գացած էր փրեդերիկոս թագաւորին մօտ: Գրիգոր եպիսկ. Ֆիրիպէցի անմիջապէս կը շտապէ ժողովատեղին՝ վերանա, ուր կ'ընդունուի մեծ պատուով: Պապը կ'ընդունի հայոց խնդրանքը և Գրիգորը կը վերադարձնէ մասնաւոր թուղթով մը առ հայս ուղղեալ, ինչպէս նաեւ Գրիգորի կու տայ լատին կարգերու և պաշտամանց վրայ մանրամասն տեղեկագիր մը, ու նաև

բազմաթիւ նուէրներ: 1185ին սկիզբը ան ճամբայ կ'ելլէ պապին մօտէն և նոյն տարւոյն Հոկտեմբերին կը հասնի Կիրիկիա, Տարսոնի մէջ հանդիպելով կաթողիկոսին: Անշուշտ մեր նիւթէն դուրս է աւելի մանրամասն խօսիլ սոյն բանակցութեանց հայկին մասին: Կս կը բանականամբ համառօտ յիշատակութիւններով տուեցրագիծ մը պատրաստել միայն:

1436ին վառնայի մէջ կար ճոխ հայ վաճառականական գաղութ մը, որոնք ճենովացը օժանդակութեամբ և պաշտպանութեամբ հոն հաստատուած էին: Այս շրջաններուն իսկ կային քիչ շատ կարեւոր գաղութներ Սոփիայի, Վէլիքոյ Թրնովոյի, Ռազկրասի, Դումէնի և Տիմոթեայի մէջ: 1453ին Սուլթան Ֆաթիհ Մէհմէտ Բ-ի օրով, երբ նոյն տարին ան կը գրաւէր Կ. Պոլիսը (Մայիս 28 — 29ին) Ֆիրիպէի մէջ կար «իշխաններով» և եկեղեցիով հայ գաղութ մը, երբ Ֆիրիպէն ալ գրաւեցին թուրքերը: 1460ին Ամիրտովաթ ամասիացին Ֆիրիպէի մէջ կը գրէր «Անգիտաց անպէտ» ի յիշատակարանը որ մեզ օտ տեղեկութիւնը կու տայ. «Թուականիս 26-ը (= 1469) ամիս Գկտ. Ի9 (26) ի կաթողիկոսութեան Տէր Բոստակէսի և յեպիսկոպոսութեան Տէր Գովակիմ»։ Այսպէս Ֆիրիպէ վանք կամ վանքեր ունենալէ զատ պէտք եղածին չափ բազմամարդ էր առաջնորդ եպիսկոպոսներ ունենալու համար, որոնցմէ մեզ ծանօթ են Գովհաննէս Ութման, Գրիգոր և Գովակիմ...:

1670էն առաջ Ֆիրիպէ ունէր հայերու կոկիկ գաղութ մը, որուն համար ձեռքիս տակ զրտնուող անտիպ թանկագին յիշատակարան մը կ'ըսէ. «Այսմ (Ֆիրիպէի) քաղքիս վաճառականք, Դորոթիցիք, Ռուումիլիցիք և Տըլլիլիցիք, ի միջի իւրեանց ութսուն և երկու դուռ ժողովեալ...» և այլն. յետոյ ուրիշ տեղ մը «... և տեղացի (Ֆիրիպէցի) Պարոն Ալեքսանոս Երեցիփոխ հանդերձ եղբարք (քանակը չկայ) դուռ: Խոճա Պետրոս և Աթանաս որդիք Ակէնաէրի (քանակը չկայ) դուռ մատուցին»։ ասոնք էին որ կամենիցէն 1671ի առեւ փախտական բազմութիւ հայերու օգնութեան հասան, հոսի յետոյ վայելելով Ապրօ Չէլէպույ օգնութիւնը ճոխ գաղութ մը կազմեցին: Ապրօ Չէլէպի պուլկարահայոց պատմութեան մէջ կարկառուն դէմք մ'է, որու մասին երկու յօդուածներով խօսեցայ Բագմավէպի 1925 Սեպտ. թիւի էջ 258 և 1926 Փետրուար թիւին մէջ «Ապրօ Չէլէպի — Նիւթեր պուլկարահայոց պատմութեան համար» ընդհանուր խորագրով:

Թաթար Բագարճըքի գաղութին պատմութիւնըն ալ հին է աւելի քան ինչ որ կը կարծուէր իմ հում նիւթերու հաւաքածոյիս մէջ ունիմ 1550էն աւելի առաջ յիշատակարաններ ալ: Նոյնպէս և Սոփիայի հայ գաղութին պատմութիւնն ալ աւելի հին է քան ինչ որ ենթադրուած էր մինչեւ հիմա: Զեռագիր հին քրքերու համեմատ հաւաքածոյիս մէջ ունիմ Դարակնոց մը, գործ վարպետ գրչի, նօտր և ձայնագրեալ, գրուած Սոփիայի Ս. Աստուածածին եկեղեցւոյն համար Ռ.Վ. Օգոստոս Ա.ին (1643 Օգոստոս 1): Թա-